Հաստատված է
Պետության և իրավունքի
տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի 28. 08. 2017 թ.
նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետ՝

.....
(ստորագրություն)

.....
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Հայաստանի ոստիկանության պատմություն 2
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, հեռակա ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն, E-mail: pitambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ռ. Սարգսյան (տնտ. գիտ. թեկնածու), Ռ. Սահակյան (պատմ. գիտ. դոկտոր), E-mail: rubensahakyan58@gmail.com, հեռ. 099 57 12 16
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		2-րդ կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր
ԿՐԵԴԻՏՆԵՐ		2 (երկու)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«Հայաստանի ոստիկանության պատմություն 2» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 56 ժամ, որից 2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 52 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ստուգարք հանձնելով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Հայոց պատմություն» առարկայի գիտելիքների հիման վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«Հայաստանի ոստիկանության պատմություն 2» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են ՀԽՍՀ ՆԳ մարմինների գործունեությունը պատմական տարբեր էտապներում, ինչպես նաև՝ ՀՀ ՆԳ նախարարությունը և միլիցիան 1990-1994 թթ. արցախյան ազատամարտում և հանցավորության դեմ պայքարում:
ՆՊԱՏԱԿ		Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին մատուցել գիտելիքներ Հայաստանի ոստիկանության ձևավորման և գործունեության պատմական շարժընթացի վերաբերյալ, մասնավորապես՝

		1. Ներկայացնել ՀԽՍՀ ՆԳ կառույցների ապակենտրոնացված գործունեությունը (1920-1934 թթ.): 2. Ներկայացնել ՀԽՍՀ ՆԳ կառույցի գործունեությունը կենտրոնացված ղեկավարության ժամանակաշրջանում (1934-1953 թթ.): 3. Ներկայացնել ՆԳ գործունեությունը «ձնհալի» ժամանակաշրջանում (1953-1965 թթ.): 4. Ներկայացնել ՆԳ գործունեությունը շուկայական տնտեսության տարրերի արմատավորման պայմաններում (1965-1985 թթ.): 5. Ներկայացնել ՀՀ ՆԳՆ գործունեությունը վերակառուցման և անկախության ժամանակաշրջանում (1985-1994 թթ.):
ԽՆԴԻՐ/ՆԵՐ		Դասընթացի խնդիրներն են՝ 1) ապագա ոստիկանին լուսաբանել իր մասնագիտության ակունքները, նրա զարգացման փուլերը, ձեռք բերած հաջողությունները, 2) զարգացնել ապագա ոստիկանի ու նաև՝ իրավաբանի մտածողությունը, ընդլայնել ուսանողների մտահորիզոնը և օգնել՝ հաղթահարելու մասնագիտական սահմանափակությունը:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1) ներկայացնել ոստիկանության (միլիցիայի) համակարգում տեղի ունեցած փոփոխությունները, 2) սահմանել տարբեր ժամանակներում ՆԳ մարմինների առջև դրված խնդիրները:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ **Հիմնական**		1. Ապիյան Ն. Ա., Պետրոսյան Ա. Հ., Իրավական պետություն և օրինականություն (2-րդ հրատարակություն, լրացված և վերամշակված), Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2001, 288 էջ: 2. Լոգվինով Ի., Էջեր Սովետական միլիցիայի պատմությունից, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1975, 101 էջ: 3. Սահակյան Ռ. Ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թ. մայիսի 8-հուլիսի 17), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2008, 1998, 56 էջ: 4. Սարգսյան Ռ. Հ., Սահակյան Ռ. Օ., Հայոց ոստիկանության պատմությունից, Ե., 2013. Մաս 1, 156 էջ: 5. Սարգսյան Ռ. Հ., Սահակյան Ռ. Օ., Հայաստանի ոստիկանության պատմությունից, Ե., 2015, Մաս II, 244 էջ: 6. Апиян Н. А., Развитие органов милиции в Армянской ССР (1920-1975 гг.), Ереван, Изд-во Ереван. ун-та, 1979, 275 с. 7. Апиян Н. А., Из истории НКВД Советской Армении (1920-1946 гг.), Изд-во Ереван. ун-та, 1986, 148 с. 8. Апиян Н. А., Маркарян Х. Г., Органы прокуратуры и внутренних дел Республики Армения и их взаимодействие в области охраны общественного порядка и борьбы с

		преступностью (1991-1998 гг.), Ереван, Издательство “Тигран Мец”, 1999, 247 с.
Լրացուցիչ (Ամսագրային հոդվածներ)		1. Ասլանյան Տաթևիկ, ՀՍԽՀ Ներքին գործերի ժողկոմատի ստեղծման պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, թիվ 2, էջ 144-148: 2. Ալեքսանյան Կարինե, Ալեքսանդրապոլի գավառը թուրքական ռազմակալման ժամանակաշրջանում, Բանբեր Հայաստանի արխիվների», 2008, թիվ 1, էջ 73--91: 3. Ալեքսանյան Կարինե, Ալեքսանդրապոլի գավառը թուրքական ռազմակալման ժամանակաշրջանում, Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, թիվ 2, էջ 123-143: 4. Խաչատուրյան Ա. Մ., Հանցավորության դեմ պայքարի ծրագրավորումը և նոր գիտական տեսության մշակումը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, թիվ 2-3, էջ 233-241: 5. Կիրիմյան Ալբերտ, ՀԽՍՀ Արտակարգ հանձնաժողովի 1923 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակաշրջանի ամփոփագրերը Խորհրդային Հայաստանի վիճակի մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2012, թիվ 1-2, էջ 75-85: 6. Խորհրդային Հայաստան. 1920-1925. Հինգ տարի, Հրատարակություն Հ. Խ. Ս. Հ. Կենտգործկոմի յեվ Ժողկոմխորհրդի, Յերեվան, 1936, 472 էջ: 7. Ղազախեցյան Վլադիմիր, Արտակարգ հանձնաժողովի տեղեկատվական գործունեության սկիզբը Հայաստանում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2010, թիվ 1, էջ 72-86: 8. Շատվորյան Հ., Հայաստանի կոմկուսի ռազմակազմակերպչական աշխատանքը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1985, թիվ 3, էջ 6-15: 9. Վիրաբյան Ամատունի, Հ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, Բանբեր Հայաստանի արխիվների, 2009, թիվ 1, էջ 109-110:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Ստուգարք (ստուգված, չստուգված)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, չի դժվարանում

		պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ճիշտ է հիմնավորում պատասխանը, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է տեսական դրույթները ճիշտ տեղայնացնել կոնկրետ օրինակներում. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
Ներկայություն		Սովորողի՝ դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև՝ մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Հայաստանի Հանրապետության հռչակումը (1918-1920 թթ.): Դատաիրավական համակարգի ձևավորումը:** **ՆԳ մինիստրության (նախարարության) և միլիցիայի կազմակերպումը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. «Միլիցիա» եզրույթի բացատրությունը: 2. ՀՀ միլիցիայի գործունեությունը 1919-1920 թթ: 3. Միլիցիայի դասընթացների կազմակերպումը: 4. Միլիցիայի ժամանակավոր օրենքի ընդունումը:	Հարցեր 1, 3, 4 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ուսումնասիրում են գրականությունը և ծանոթանում ՀՀ միլիցիայի գործունեությունը 1919-1920 թթ: Հարցեր 1-4 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են դասավանդված հարցերի առնչությամբ իրենց գիտելիքները, քննարկում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

Հարցաշար
«Հայաստանի ոստիկանության պատմություն» դասընթացի ստուգարքի

1. Ինչ է ուսումնասիրում «Հայաստանի ոստիկանության պատմություն» առարկան
2. «Ոստիկան» եզրույթի փոփոխությունները պատմական տարբեր ժամանակահատվածներում
3. Հայկական պետականության ստեղծման նախադրյալները և այդ գործում հայ անհատների դերն ու նշանակությունը
4. Վանի ժամանակավոր վարչության դատաիրավական համակարգի հիմնումը
5. Վանի հայկական իշխանության ոստիկանության կազմավորումը և գործունեությունը
6. Ոստիկանության պայքարը հանցավորության դեմ: Ոստիկանության ժամանակավոր օրենքը
7. «Միլիցիա» եզրույթի բացատրությունը
8. ՀՀ միլիցիայի գործունեությունը 1919-1920 թթ
9. Միլիցիայի դասընթացների կազմակերպումը
10. Միլիցիայի ժամանակավոր օրենքի ընդունումը
11. Բանվորա-գյուղացիական միլիցիայի կազմակերպումը (1920 թ. դեկտեմբերի 15)
12. Բանվորա-գյուղացիական միլիցիայի կանոնադրությունը
13. Կադրային քաղաքականությունը: Միլիցիայի դասընթացների կազմակերպումը
14. Ուղղիչ-աշխատանքային հաստատությունները
15. Կանոնադրական խնդիրների կարգավորումը
16. Միլիցիայի պայքարը արտաքին և ներքին հանցավորության դեմ
17. ԽՍՀՄ ՆԳԺԿ գերատեսչական և ճյուղային ստորաբաժանումները
18. Միասնական անձնագրային համակարգի ներդնումը
19. ՆԳԺ կոմիսարիատը և միլիցիան Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)
20. ՆԳ մարմինների գործունեությունը
21. Կամավոր դրուժինաների կազմակերպումը
22. Ի. Ստալինի անհատի պաշտամունքի քննադատությունը և միլիցիայի գործունեությունը նոր պայմաններում
23. Օպերատիվ իրավիճակը և կազմակերպչական փոփոխությունները
24. Օպերատիվ իրավիճակը
25. Կազմակերպչական փոփոխությունները
26. Հասարակական կարգի պահպանության նախարարություն (մինիստրություն)
27. Տնտեսական բարենորոգումները: Ստվերային տնտեսություն
28. ՆԳ մարմինների գործունեության ակտիվացումը
29. Պայքար կոռուպցիայի դեմ
30. Միլիցիայի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներն ու արդյունքները: Երևանի միլիցիայի միջնակարգ մասնագիտական դպրոցի հիմնումը

31. Պայքար կազմակերպված հանցավորության դեմ
32. 1988 թ. երկրաշարժը և Ներքին գործերի նախարարության գործունեությունը տարերային աղետի պայմաններում
33. Արցախյան ազատագրական շարժումը և ՆԳ մարմինների գործունեությունը նոր պայմաններում
34. Օպերատիվ իրավիճակը
35. Չհայտարարված պատերազմ
36. Օպերատիվ իրավիճակի սրացումը: միլիցիայի օպերատիվ հակազդման ջոկատ
37. Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատ
38. Ներքին զորքերի կազմավորում
39. ՀՀ ներքին զորքերի բարձրագույն դպրոց: ՀՀ ոստիկանության ակադեմիա: ՀՀ ոստիկանության կրթահամալիր
40. Միջազգային քրեական հետախուզություն (Ինտերպոլ)